

ՀԱՅՆՐԵՆԻ ՏԵՐԽԻՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ*

Ռ. Ա. ԻՇԽԱՆՅԱՆ

Հայ լեզվաբանների կողմից վերջին տասնամյակներում ստեղծված մեծածավալ գիտական գրականության մեջ տերմինաբանության հարցերը աննշան ուշադրության են արժանացել: Մինչդեռ անվիճելի է, որ հայերենի տերմինաշինության, տերմինագործածման սկզբունքների տեսական մշակումը և նրանց պորժագրումը գիտության, մշակույթի տարբեր բնագավառների լեզվում, ուստի և հայոց գիտական լեզվի կատարելագործումը շատ ավելի հրատապ ու կարևոր խնդիր է, քան միևնույն քերականական կարգի մասին մի քանի ծավալուն գիրք գրելը:

Տերմինաբանական հարցերը գիտական ուսումնասիրության նյութ զարմենելը կարևոր է մանավանդ այն պատճառով, որ այդ հարցերի վերաբերյալ հրատարակվել ու հրատարակվում են այնպիսի աշխատանքներ, հոգվածներ, որոնցում հեղինակները հաճախ առաջնորդվում են ոչ թե գիտական բազմակողմանի հիմնավորումների, փաստարկումների եղանակով, այլ ավելի շատ նեղ անձնական պատկերացումներով, ճաշակով, գիտական լեզվաբանության հետ կապ չունեցող տեսակետներով: Խոսքը լեզվաշինության և մասնավորապես տերմինաշինության հարցերին նվիրված այն, բավական նկատելի քանակ կազմող աշխատանքների, հոգվածների մասին է, որոնցում արտահայտված տեսակետները հայ լեզվաբանության մեջ «օտարաբան» անունն են ստացել:

Ներկա հոգվածում բերում ենք հիշյալ ուղղության ներկայացուցիչների կողմից տարբեր ժամանակ, տարբեր աշխատություններում, հոգվածներում¹ բերված բոլոր փաստարկները հօգուտ իրենց տեսակետների և փորձում ենք մեկ առ մեկ հերքել դրանք:

1. Տարբեր գիտությունների և մշակույթի ճյուղերի մեջ գործածվող գիտական անվանումները, տերմինները հայերեն թարգմանելու հակառակորդները, հաճախ, իբրև լուրջ փաստարկ, բերում են այն, որ իբր սովորական բառը գիտական տերմինից խստորեն պետք է սահմանազատել և տարբեր մոտեցում ունենալ լեզվի սովորական բառապաշարի և տերմինների պաշարի հարստաց-

* Տպագրվում է մտքերի փոխանակության կարգով:

¹ Տե՛ս, օրինակ, ամսագրեր՝ «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ (հաս. գիտ.), 1951, № 7, էջ 24, 43—45, 48—49, 73—75, «Октябрь», 1956, № 10, էջ 186—191, «Русский язык в школе», 1966, № 6, էջ 83—84, «Առողջապահություն», 1966, № 2, էջ 42—46, «Սովետական գրականություն», 1967, № 7, էջ 131—137. լրագրեր՝ «Երևան», 1963, № 129, «Խորհրդային Հայաստան», 1940, № 35, 200, «Գրական թերթ», 1969, № 4, «Սովետական Հայաստան», 1967, № 202, «Սովետական ուսանողություն», 1954, № 6, առանձին գրքերում՝ Ա. Ո ս կ եր չյ ա ն, Քննադատություն և հրապարակախոսություն, Երևան, 1968, էջ 518—547, И. Кускян, Изменения в словарном составе армянского языка советского периода, Москва, 1964.

ման նկատմամբ: Այս փաստարկը բերվում է այն նպատակով, որ նախ տերմինաբանության բնագավառում օրինականացվի օտար գիտական անվանումները հայերեն թարգմանելուց հրաժարվելու դրույթը, ապա նոր միայն այն հնարավոր լինի տարածել լեզվի ընդհանուր բառասյաշարի վրա: Ասվում է, որ մի լեզվի բառերը («սովորական բառերը») բոլորովին տարբեր են այդ լեզվում գործածվող տերմիններից և որ տերմինները, իբրև բառից տարբեր երևույթ, ոչ մի պարագայում չպետք է թարգմանվեն: Բայց իրականում ի՞նչ է տերմինը: Այն անպայման բառ է (ինչպես, օրինակ, աստղափուլ, ուղեծիր, շաճաք, մակբայ, երկրաչափություն, արտադրամիջոցներ և այլն) կամ բառակապակցություն (սպիտակ թզուկներ, շուտովիկ շաճաքալիք մեխանիզմ, խոսքի մասեր, բարձր լարվածության հոսանք և այլն), որ արտահայտում է գիտության, տեխնիկայի, մշակույթի որևէ բնագավառի գիտական մեկ հասկացություն՝ ամենախիստ եզրերով: Տերմին հենց նշանակում է եզր, սահման²: Ամեն մի գիտության բնագավառի տերմինաբանություն այդ բնագավառի բաղկացուցիչ մասն է:

Բայց տերմինը ոչ միայն բառ է, բառի մի տեսակը, այլև որևէ անջրպետ չկա տերմին-բառի և սովորական բառի միջև: Հազարավոր գեղքերում սովորական կոչված բառերը գիտության այս կամ այն բնագավառում գործածվում են իբրև տերմիններ, ինչպես, օրինակ, օդ, հուր, երկաթ, սղինձ, սնդիկ, հեղուկ, թթու, աղ և այլն հայերենի ամենասովորական բառերից են, բայց գրանք տերմիններ են, գիտական անվանումներ քիմիայի մեջ: Կամ՝ ոսկուր, յլարդ, ողնաշար, կոճիկ, արյուն, մաշկ, մազ, ուռվալն, աղիք, ստամոքս, պորտ, մատ, ոտ, աչք և այլն նույնպես սովորական բառեր են, բայց գիտական անվանումներ են կազմախոսության մեջ, երբեմն նաև՝ այլ բնագավառներում (ինչպես՝ էլեկտրամագնիսական աչք, շարժաթևի մատ և այլն):

Մյուս կողմից, գիտության որևէ բնագավառում գուցե շատ ու շատ գիտական անվանումներ մտնում են ոչ գիտական լեզվի մեջ և դործածվում իբրև սովորական բառեր, ինչպես, օրինակ, թրվածին, ջրածին, արբանյակ, մոլորակ, տիեզերանավ, հեռուստատեսություն, քվադրոնություն և այլն:

Ի՞նչ լեզվում գիտական անվանումները ստեղծվում և գործածվում են լեզվական ճիշտ այն բառակազմական ու քերականական կանոններով, որոնցով ստեղծվում ու գործածվում են բոլոր բառերը և բառակապակցությունները: Այսպիսով, մի լեզվում գործածվող բառերը տերմիններից անջրպետելը անհիմն է և անհնար: Տերմինները բառեր են և, եթե դործածվում են տվյալ լեզվում, նրա տառերով ու կանոններով, կնշանակի այդ լեզվի բառասյաշարի մի մասն են: Ուրեմն մի լեզվի տերմինաչինությունը այդ լեզվի բառաչինության մի հատվածն է, ենթակա նրա բոլոր օրենքներին:

2. Ի՞նչու փաստարկը, որ համարվում է «ամենագորեղը» և ամենատարածվածն է, հետևյալն է. կան միջազգային բառեր և տերմիններ, որոնք գործածվում են աշխարհի բոլոր լեզուներում, հայերենն էլ բացառություն չպիտի լինի:

² Հայերենում կա տերմին լատիներեն բառի բառացի թարգմանությունը՝ եզր (որից կազմվել են Լ.Գրաբանություն, Եզրաչինություն), որ և հաջողությամբ գործածվում է արևմտահայերենում: Նաև՝ գիտաբան, արվեստաբան, բացատրաբան, անվանում և այլ թարգմանություններ: Մենք ենք գործածում Եզր-ը և նրանից կազմվածները միայն այն պատճառով, որ արևելահայերենում նրանք առայժմ անսովոր են: Սակայն տերմին-ի հետ ղուգահեռ այս հոգվածում գործածում ենք նաև անվանում, գիտայան անվանում:

Այս փաստարկի անճշտությունը ցույց ապառ նախ պետք է ասել, որ գիտական անվանումների երկու տեսակ պետք է տարբերել: Մեկն այն է, որ ամեն մի լեզվի գիտական տարբեր ոճերում գործածվում է այդ լեզվի հնչյունաբանական, բառակազմական, քերականական կանոնների համաձայն, այդ լեզվի տառերով: Այս կարգի անվանումները, ստորև ցույց կտանք, որ երբևէ միջազգային չեն եղել և չեն: Գիտական անվանումների մյուս տեսակը հունալատինական այն տերմիններն են (բույսերի, կենդանիների, հիվանդությունների, դեղամիջոցների անուններ և այլն), որոնք մասնագիտական խոսքում գրվում են լատինատառ և այդ վիճակում որևէ կենդանի լեզվի բառապաշարի մաս չեն կազմում, ինչպես, օրինակ՝ punctum fixum կամ processus temporalis: Այս կարգի անվանումները, քանի գեղ չեն ենթարկվում որևէ կենդանի լեզվի կանոնների, գրվում են լատինատառ, այգքանով էլ կարող են համարվել միջազգային: Այդ անվանումների մի զգալի մասը կենդանի լեզուներում ունենում է համարժեքներ (ինչպես, օրինակ, հայերենում՝ n̄edicus—բժիշկ, facies—դեմք, medulla — ուղեղ և այլն), նրանց մի մասը տարբեր լեզուներում կարող է թարգմանվել նորակազմ բառերով կամ բառակապակցություններով (ինչպես, օրինակ, հայերենում՝ vasa capillaria — մազանոթներ, punctum lacrimale—արտասվակետ, plantago major— եզան լեզու (բուս.), cholerrhagia—լեղահոսություն և այլն), մի մասն էլ կարող է տվյալ լեզվի տառերով, նրա բառակազմական ու քերականական կանոններով օգտագործվել իբրև փոխառյալ բառ (ինչպես, օրինակ, հայերենում՝ chlorum—քլոր, vitaminae—վիտամին և այլն): Երբ հունալատինական (լատինատառ) անվանումները թարգմանվում են այս կամ այն լեզվում կամ իբրև փոխառյալ բառ գործածվում այդ լեզվի կանոններով, այլևս գաղտնում են տվյալ լեզվի բառապաշարի մի մասը, ենթակա նրա զարգացման օրինաչափություններին: Այս կարգի անվանումներն արդեն միջազգային կոչվել չեն կարող, քանի որ ամեն լեզու յուրովի է վճռում այն հարցը, թե լատինատառ գրվող հունալատինական այս կամ այն անվանումը պե՞տք է թարգմանվի և արտահայտվի տվյալ լեզվի միջոցներով, թե՞ գործածվի իբրև փոխառյալ բառ:

Եթե միջազգային անվանվելին լատինատառ գործածվող վերոհիշյալ հունալատինական անվանումները, որոնք կենդանի լեզուների բառապաշարի մաս չեն կազմում, վիճելու նյութ հասկանալի է, որ չէր լինի: Սակայն հայերենում օտարաբանությունների պաշտպանները միջազգային բառեր ու տերմիններ են համարում այնպիսիք, որոնք իրականում միջազգային չեն: Այսպես, օրինակ, 1940 թվականի որոշմամբ, երբ հայերեն նստաշրջան, պատգամավոր, կուսակցություն, հանրապետություն, խորհուրդ (խորհրդային), սահմանադրություն, հեղափոխություն բառերը և նրանցից կազմվածները հանվեցին ու փոխարենը օգտագործման հանձնարարվեցին սեսիա, դեպուտատ, պարտիա, ռեսպուբլիկա, սովետ (սովետական), կոնստիտուցիա, ռևոլյուցիա բառերը, իբրև միակ պատճառաբանություն բերվեց այս վերջինների իբր միջազգային լինելը³: Սակայն փաստը, իրողությունն այն է, որ հիշյալ բառերից և ոչ մեկը միջազգային չէ: Մենք նայել ենք շուրջ 20 լեզուների բառարաններ. որից պարզվել է, որ հիշյալ հասարակական-քաղաքական անվանումներից չկա գեթ

մեկը, որ լինի դոնե բոլոր այդ 20 լեզուներում (դեռ չհաշված աշխարհի մյուս հարյուրավոր լեզուները)։ Ավելին, միջազգային դիտված բառերից մի քանիսը կան այդ ստուգված լեզուներից և ոչ մեկում։

Օրինակ, ամենից ավելի միջազգային գիտված սովետ բառը թարգմանվում է նույնիսկ խորհրդային Միության մի շարք լեզուներում, այդ թվում՝ ուկրաիներենում, լատվիերենում, էստոներենում, լիտվերենում, վրացերենում և այլն, ի դեպ, այն թարգմանվում է նաև հայերենի մյուս վաղեմի հարևանի՝ պարսկերենի մեջ⁴։

Միջազգային համարված մյուս հասարակական-քաղաքական անվանումները (կոնստիտուցիա, պարտիա և այլն) առաջին հայացքից թվում են գոնե եվրոպական լեզուների համար ընդհանուր։ Սակայն պարզվում է, որ այդ էլ ազպես չէ։ Օրինակ, ասենք, չեխերենը պարտիա, սեսիա, դեպուտատ բառերի դիմաց ունի strana, zasedani, poslanec, սլովակերենը թարգմանում է ոչ միայն այդ երեք բառերը, այլև կոնստիտուցիա-ն (ustava)։ Ինչ վերաբերում է ոչ եվրոպական, հատկապես ասիական լեզուներին, ապա նրանց մի զգալի մասը գրեթե բոլոր (իսկ հաճախ՝ բոլոր) այդ բառերի դիմաց ունի սեփական անվանումները (համոզվելու համար պետք է միայն բաց անել, ասենք, կորեերենի, վիետնամերենի, չինարենի, հնդկական, ինդոնեզական կամ բիրմայական լեզուների բառարանները)։

Անուհետև, տարբեր աշխատություններում առարկություն չվերցնող եղանակով միջազգային են հայտարարվել այնպիսի բառեր ու անվանումներ, ինչպես, կուլտուրա, ադմինիստրացիա, տեխնիկա, պոլիտիկա, լոգիկա, ֆիզիկա, ֆիզիկա, ինքվիստիկա, տեխնոլոգիա, արխիտեկտուրա, էսթետիկա, ավտոմոբիլ, ռադիո, տրամվայ, վագոն, լիֆտ, կինո, գաստրոլ, տուրիստ, օպերա, թատրոն և այլն։ Այսպես հայտարարողները կամ օգտվում են ընթերցողի անտեղյակությամբ և կամ իրենք երբևէ չեն հետաքրքրվել, թե իրենց միջազգային թվացող այդ և ուրիշ շատ բառեր իրոք աշխարհի բոլոր լեզուներում, կամ գոնե լեզուների զգալի մասում գործածվում են։ Մենք ստուգել ենք օտարաբան ուղղության պաշտպանների կողմից միջազգային հռչակված բոլոր բառերը մի շարք լեզուների բառարաններում, որից պարզվել է, որ չկա այդ բառերի մեջ գեթ մեկը, որ գործածական լիներ գոնե մեր ստուգած բոլոր լեզուների մեջ, օրինակ, կուլտուրա բառը (և սրանից կազմվածները), որ անառարկելիորեն միջազգային է գիտվում, թարգմանվում է պարսկերենում, վիետնամերենում, բենգալերենում, բիրմայերենում, չինարենում, հինգիում, ֆիններենում, հունարենում, հունգարերենում և այլն։ Տանկ բառը, որ համառությամբ, մի քանի հոգվածում միջազգային է հայտարարել Ա. Ոսկերչյանը⁵, թարգմանվում է շատ լեզուներում և նույնիսկ եվրոպական այնպիսի լեզուների մեջ, ինչպես իտալերենը (բարրո), գերմաներենը (պանցերվազեն), հունգարերենը (հարկոկշի), ֆիններենը (հյոկկայսվաունու) և այլն։ Շատերն են նույն համառությամբ

⁴ Այս լեզուներում советы և советский բառերի դիմաց գործածվում են. ուկրաիներենում՝ рада, радянський, լատվիերենում՝ padome, padomju, էստոներենում՝ nõukogu, noukoguude, լիտվերենում՝ taryba, tarybinis, վրացերենում՝ საბჭო, საბჭოთა, պարսկերենում՝ շուրա, շուրավի։

⁵ Նե՛ս նրա վերո հիշված «Քննադատություն և հրապարակախոսություն» գիրքը, էջ 518—547, նաև՝ «Սովետական դրականություն», 1967, № 7, «Գրական թերթ», 1969, № 4։

միջազգային հայտարարել ունալիզմ բառը, որը սակայն նույնպես թարգմանվում է շատ ու շատ լեզուներում, այդ թվում՝ բենգալերենում, հինգիում, վիետնամերենում, ռիմալայերենում, չինարենում և այլն:

Նույնիսկ «անտարակույս» միջազգային թվացող հունարեն theatron և լատիներեն opera բառերը թարգմանվում են մի շարք լեզուներում, այդ թվում եվրոպական որոշ լեզուներում, ինչպես, օրինակ, նույն չեխերենում (առաջինը թարգմանվում է դիվադլո, երկրորդը՝ զպեվոհրա):

Հոգվածի սահմանները թույլ չեն տալիս թվարկելու, թե միջազգային համարվող վերոհիշյալ լուրջ բառերից որքա՞նը լեզուներում է թարգմանվում (ցանկացողը կարող է ստուգել տարբեր լեզուների բառարաններում):

Հասկանալի է նաև, որ տարբեր լեզուների օրինակները մենք բերում ենք ոչ թե այն նպատակով, որ պահանջ առաջադրենք անխտիր հայերեն թարգմանելու բոլոր վերոհիշյալ կարգի բառերը (այդ թվում ասենք՝ քաառոն-ը, վազոն-ը և այլն): Մեր նպատակն է սոսկ ցույց տալ, որ ճիշտ չէ այդ բառերը միջազգային անվանել հօգուտ օտարաբանությունների դործածման:

3. Հաջորդ փաստարկը, որ մասամբ նման է նախորդին և նույնպես շատ է բերվում, հետևյալն է. «Ինչու, — ասում են, — աշխարհի բոլոր կուլտուրական ազգերի լեզուները միմյանցից առատորեն բառերու տերմիններ են փոխառնում և փոխադարձաբար միմյանց հարստացնում, իսկ հայերենը պետք է մեկուսանա, և դրանով աղքատանա»: Իբրև քաղաքակիրթ ազգերի լեզուներ սովորաբար թվարկվում են անգլերենը, ռուսերենը, գերմաներենը, ֆրանսերենը:

Նախ, ասենք, որ ծայրահեղ թյուրիմացություն է միայն այս չորս լեզուն համարել փառափառք և իբրև օրինակ դրանք թվարկել՝ մոռանալով ուրիշ շատ լեզուներ, այդ թվում՝ եվրոպական:

Բայց այդ չորս լեզվի օրինակն անզամ առատ փոխառությունների տեսակետը հաստատելու համար բնավ հաջող չէ: Դա սոսկ հեշտ արվող հայտարարություն է առանց իրական փաստերի ստուգման:

Ճիշտ չէ փոխառությունների տեսակետից բնույթով իրարից շատ տարբեր այս լեզուները զնել միմյանց կողքի: Օրինակ, այդ տեսակետից հակապատկեր են հնդեվրոպական լեզվարնտանիքի միևնույն ղերմանական ճյուղին պատկանող անգլերենն ու գերմաներենը: Առաջինը, հայտնի է, որ իրոք, հակում ունի փոխառությունների նկատմամբ, և նրա բառապաշարի ղգալի մասը բաղկացած է հին ու նոր փոխառություններից (թեև չպետք է մոռանալ, որ անգլերենը փոխառյալ բառը այնպես է հարմարեցնում իր արտասանական հիմքին «անգլերենացնում», որ բառի կամ տերմինի ոչ անգլերեն լինելը չի ղգացվում): Եվ, այնուամենայնիվ, սխալ պատկերացում է այն, թե անգլերենը անխտիր վերցնում է ամեն մի օտար տերմին ու բառ, որ գալիս է այլ լեզվից, որևէ նոր երևույթի կամ առարկայի հետ: Աղատ լինել փոխառությունների հարցում չի նշանակում անսահմանորեն աղատ լինել: Եվ այդպես, անգլերենը համեմատաբար աղատ է փոխառությունների հարցում, մինչդեռ գերմաներենը հակառակ անգլերենի շատ խիստ է նույն այդ հարցում, և ուղղակի բացարձակ անգիտության արդյունք է այս լեզուն զնել անգլերենի կողքին ու իբրև առատ փոխառությունների փաստարկ բերել: 1963 թվականին «Երևան» թերթում բժշկական անվանումների շուրջ սկսված բանավեճի ժամանակ բժիշկ Լ. Գևորգյանը⁶ իրավացիորեն պահանջ դրեց օգտագործել հայերեն բժշկական այնպիսի

⁶ «Երևան», 1963, հունվարի 22:

անվանումներ, ինչպես, ատամնաբուժարան, մանկաբույժ, ակնաբույժ, ախտորոշել, ախտականխիչ և այլն: Բայց այս բնականոն պահանջի հակառակ, օտարաբանությունների հետևողական պաշտպաններից մեկը՝ Ար. Ոսկանյանը «Գիտական տերմինաբանության հարցի շուրջը» հոդվածում⁷ (որով ավարտվեց բանավեճը), պնդում էր, թե հիշյալ հայերեն անվանումները պետք է խստորեն մերժել և որ հայերենում չպետք է թարգմանվեն այնպիսի բժշկական անվանումներ, ինչպես՝ պելլիաուր, դերմատոլոգ, գինեկոլոգ, օկուլիստ, քերապիա, քերապետ, ինֆեկլիա, ստոմատոլոգ և այլն: Պատճառաբանությունն այն էր, որ այդ բառերը գործածվում են հիշյալ լեզուներում, իհարկե, նաև գերմաներենում: Մինչդեռ հենց հատկապես գերմաներենի օրինակը լիովին հեղինակի փաստարկի մերժումն է, քանի որ այս լեզվում հունա-լատինական ալո անվանումների դիմաց կան սեփական բառեր, համապատասխանաբար՝ der Kinderarzt, der Hautarzt, der Frauenarzt, der Augenarzt, die Heilkunde, der Internist, die Ansteckung, der Zahnarzt): Եթե գերմաներենի օրինակը իրրև բժշկական անվանումները չթարգմանելու փաստարկ բերող հեղինակո (և ոչ միայն նա) նեղություն կրեր բացելու գերմաներենի որևէ բառարան, ապա կտեսներ, որ այդ լեզվում թարգմանվում են ոչ միայն վերոհիշյալ կարգի բժշկական բաղաձայնի անվանումներ, այլև ուրիշ բնագավառների վերաբերող շատ ու շատ տերմիններ ու բառեր, նույնիսկ այնպիսիք, ինչպես՝ տրամվայ, ավտոմոբիլ, ավիացիա, ֆուտբոլ, տելեֆոն, լիֆտ, մագնիտաֆոն, ուսկիովուկատոր և այլն:

Ինչ վերաբերում է ֆրանսերենին, ապա թեև այս լեզուն գիտական անվանումների փոխառությունների հարցում ավելի ազատ է, բայց սխալ է ասել, թե «ֆրանսերենը համարձակորեն փոխ է առնում հաղարավոր օտար բառեր ու տերմիններ»: Բավական է նշել, որ վերջին երկու տասնամյակում Ֆրանսիայում հատուկ պայքար է տարվում ֆրանսերենը օտար բառերի և գիտական անվանումների անհարկի գործածությունից մաքրելու ուղղությամբ: Ֆրանսիայում զործում է լեզվաբանական հատուկ խորհուրդ օտարաբանությունների դեմ պայքարելու համար:

Ոսկանյան առաջանում է նաև մի այլ հարց. ինչո՞ւ են հայերենի լեզվաշինության հարցերը լուծելու համար իբրև օրինակ բերվում հատկապես այս լեզուները և մոռացության տրվում, ասենք, պարսկերենը, չեխերենը, սլովակերենը, բենգալերենը, հինգին, վիետնամերենը, արաբերենը և այլն, որոնք օտար փոխառությունների հարցում հաճախ գերմաներենից էլ խիստ են:

Իվ առհասարակ որքանով է ճիշտ մի լեզվի տերմինաշինության ուզին որոշելիս վերցնել մի այլ լեզու (կամ լեզուներ) իբրև շափանիշ, որ միշտ անու՞ են օտարաբանական տեսության ներկայացուցիչները: Ուշագրավ է, որ տերմինաբանության հարցերին նվիրված համամիութենական խորհրդակցությունում (Մոսկվա, 1959 թ.)⁸ հարց զրվեց տերմինաշինության բնագավառում տարբեր լեզուների նկատմամբ տարբեր շափանիշներ կիրառելու մասին: Գրված լեզուների մեջ (հեղինակներ Տ. Բերտադան, Յու. Դեշերիև, Ի. Իսաև, Վ. Լիտկին, Ս. Հայդակով, Ա. Շահիրով) որոշակիորեն հարց էր դրվում տեր-

⁷ «Նրևան», 1963, հունիսի 2,

⁸ Ելույթներ տե՛ս «Вопросы терминологии» (Материалы Всесоюзного терминологического совещания). Москва, АН СССР, 1961.

մինաշինության բնագավառում հաշվի առնել ամեն մի լեզվի յուրահատկությունը: Օրինակ, հնագիր լեզուների մասին խոսելիս զեկուցողները առաջ էին քաշում այդ լեզուների պատմական ավանդները, բառապաշարը և բառակերտական ունակությունները լիովին հաշվի առնելու հարցը: Մասնավորապես հայերենի ու վրացերենի մասին ասվում էր. «Բառաստեղծական հարուստ ունակությունները, պատմական ավանդները, որոնց արմատները հասնում են մինչև խոր հնություն, հնարավորություն են տալիս այս երկու լեզուներին նոր անհրաժեշտ բառերն ու տերմինները ստեղծել իրենց վաղեմի բառապաշարի հիմքի վրա»⁹:

Եվ այդպես, ուրիշ լեզուների փաստարկը, որ բերում են հայ տերմինաբանության մեջ շահմանափակվող փոխառությունների տեսության կողմնակիցները, նաև մեծ մասամբ հենց այդ տեսության դեմ է խոսում և ապա գիտական փաստարկ չէ, քանի որ տարբեր լեզուներ տարբեր օրինաչափություններ են ունենում տերմինաշինության բնագավառում, և ամեն դեպքում պահանջվում է յուրովի վերաբերմունք:

4. Հիշյալ տեսության պաշտպանների սովորական փաստարկներից մեկն էլ այն է, որ հայերենը առաջներում բավական փոխառություններ է կատարել ուրիշ լեզուներից: Այս դրույթից եղրակացություն է արվում, որ եթե լեզվում անցյալից եկող շատ փոխառություններ կան, թող նորերն էլ կատարվեն առանց որևէ սահմանափակման:

Այսպիսի հարցադրումն անդամ թվում է ոչ հիմնավոր: Նախ մի կողմ է թողնվում այն հարցը, թե ի՞նչ ասել է «շատ» փոխառություններ, ապա չի խոսվում այն մասին՝ լա՞վ է, թե վատ, որ անցյալում այդպես «շատ» փոխառություններ են կատարվել: Եվ վերջապես խոսքն այն մասին չէ, որ այժմ էլ կան դեպքեր, երբ փոխառությունից խուսափել հնարավոր չէ, այլ ուղղակի դրվում է պահանջ. «Եթե առաջ եղել են շատ փոխառություններ, թող հիմա էլ լինեն»: Ինչպես տեսնում ենք սա հեռու է զիտական հարցադրում լինելուց: Այո՛, տասնյակ դարերի ընթացքում տարբեր լեզուներից հայերենի մեջ ոչ քիչ բառեր են թափանցել, բայց մի՞թե դա նշանակում է, որ այսօր հայկաբանների պարտքն է հնարավորին չափ շատացնել եղած փոխառությունների քանակը: Կուցե անցյալում կատարված փոխառությունների փաստից հակառակ՝ էլ բխում՝ այժմ հնարավորին չափ քիչ դիմել փոխառությունների:

Այնուհետև, ինչպե՞ս կարելի է մոռանալ, որ հայերենի կատարած ամենաշատ փոխառությունները պարսկերենից են, որոնք մեծ մասամբ նախամեսրոպյան շրջանին են վերաբերում: Այդ բառերը հնում պարսկերենից անցել են խոսակցական հայերենին, հարմարվել հայերենի արտասանական հիմքին (օրինակ, պարսկական խշանա-ն դարձել է իշխան, ուշի-ն՝ ուշ, խշադհրա-ն՝ աշխարհ, պահուակ-ը՝ պահակ, վիսպուհր-ը՝ սեպուհ, ուտա-ն՝ առատ և այլն), հայացվել ու վաղուց ի վեր իրավացիորեն հայերեն բառեր են համարվում (ընդ որում, այժմ այդ հին փոխառությունների մի մասը միայն հայերենում կա):

Բացի դրանից, պետք է հիմնավոր համարել որոշ բանասերների հայտնած այն կարծիքը, որ հայերեն փոխառյալ բառերի, հատկապես պարսկերենից կատարված փոխառությունների հարցը չափազանցված է: Որոշ դեպքերում տարակուսանք է հարուցում նախամեսրոպյան շրջանից եկող հայերեն մի շարք

⁹ Տե՛ս նշվ. գիրքը, էջ 15—16:

բառերի «պարտադրված» ծագումնաբանությունը, անպայման օտար լեզվի այս կամ այն բառից նրանց բխեցնելը, երբ հայերենով շատ լավ ստուգաբանվում են: Մի անգամ տրված դնահատականների ինչ-որ մասը, ըստ երևույթին, վերանայման կարոտ է:

Այնուհետև, առանց բավարար հիմքի երբեմն փոխառյալ բառերի մեջ են դրվում հայերենի շտուգաբանված, այսպես կոչված, անհայտ բոլոր արմատները (մոտ 3000), որոնց մեծ մասը անհիշելի ժամանակներից հայերենի բառազանձի անկապտելի մասն է կազմում: Իսկ այլ լեզուներով շտուգաբանվելը՝ սոսկ հայերեն բառեր կոչվելու իրավունքն է տալիս նրանց հիմնական մասին: Այդ բառերի մեծագույն մասը կարող է միայն բնիկ հայերեն բառեր համարվել. նախ նրանցում մի զգալի շերտ պետք է որ հնդեվրոպական ծագում ունենա, իսկ մյուս շերտերն այնպիսի վաղեմություն ունեն և այնքան են հատուկ միայն հայերենին, որ պետք է դիտվեն (և այլ կերպ էլ չեն կարող դիտվել) բուն հայկական: Ոչ քիչ լեզվաբաններ հենց այսպես էլ պատկերացրել և պատկերացնում են հարցը:

Այլ են հայերենի այն բառերը, որոնց փոխառյալ լինելը գիտականորեն հիմնավորվում է: Դրանք, իրոք, հին կամ նոր փոխառություններ են: Սակայն այս դեպքում էլ շատ կարևոր է նկատի ունենալ, որ հայերենում իրոք փոխառյալ բառերի քանակական սլատկերը գրականության մեջ ճիշտ չի ներկայացվում: Սովորաբար հայերեն փոխառյալ բառեր անվան տակ գրվում է յուրաքանչյուր օտար բառ, որ գործածվել է (թեկուզ մեկ անգամ) հայ մատենագրության մեջ: Հայոց լեզվի փոխառյալ բառերի քանակը տալիս ավանդաբար բերում են Հ. Աճառյանի թվերը՝ պարսկերենից՝ 1405 բառ, հունարենից՝ 915 բառ, ասորերենից՝ 209 բառ, եբրայերենից՝ 138 բառ, արաբերենից՝ 702 բառ և այլն¹⁰: Իրականում այս և նույն կարգի մյուս թվերը հայերենում ներկայումս եղած փոխառյալ բառերի ճիշտ պատկերը չեն ներկայացնում, այլ սոսկ ցույց են տալիս, թե հայ մատենագրության մեջ առանձին լեզուներից քանի բառ է գործածված: Այդ բառերի մի զգալի մասը երբևէ մտած չի եղել հայոց լեզվի գործուն բառազանձի մեջ, այսինքն՝ չի դարձել հայերենում շատ թե քիչ դործածական բառ, ինչպիսիք դարձել են, օրինակ, պատմություն, գործ, իշխան, եկեղեցի, մկրատ, շրջա, շուկա և ուրիշ իրոք փոխառյալ հայերեն բառեր: Փոխառյալ բառերի ցուցակներում գրանցվող բազմաթիվ բառեր առանձին հեղինակների կողմից գործածվել են սոսկ հայերեն լավ չիմանալու պատճառով, շատ օտար բառեր էլ ընդամենը մեկ անգամ են գործածվել կամ սպրդել առանձին հայերեն բնադրերի մեջ: Մյուս կողմից, տարբեր լեզուներից հայերենին անցած և նրանում իբրև փոխառություն գործածված շատ բառեր էլ տարբեր ժամանակ փոխարինվել են հայերեն բառերով:

Ինչ վերաբերում է ժամանակակից հայերենին, ապա նա անդյալի իրոք փոխառյալ և կամ պատահականորեն գործածված օտար բառերի մի փոքր մասն է պահպանել:

Սենք նայեցինք փոխառյալ բառերի Հ. Աճառյանի բերած ցուցակները, և սլարգ դարձավ, որ նրանցում նշված բառերի հիմնական մասը արդի հայերենին բոլորովին խորթ է և անծանոթ: Վերցնենք պարսկերեն փոխառություն-

¹⁰ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 1, Երևան, 1940, էջ 292, 342, մաս 2, Երևան, 1951, էջ 10, 34, 55:

ները: Մի՞թե կարելի է, օրինակ, աքաշփարիստ (կրակապաշտ)¹¹, բալափույ (վերարկու), բեհեշտի (դրախտային), զանգալ (կատակ), դաստիշոն (կոնք), զամխել (վիրավորել), քարանկուպին (մանանա), լաֆուփաֆ (աղեղնավոր), իշտրմուղ (ջայլամ), խալաշուրի (թուր), սարուփարտա (վրան), սուրխամահի (ծուկ) և հարյուրավոր ուրիշները այսօր պարսկերենից փոխառյալ հայերեն բառեր համարել միայն այն պատճառով, որ նրանք գործածված են հայ հին մատենադրության այս կամ այն երկի մեջ: Այսպես նայելով պարսկական փոխառյալ բառերի ամբողջ ցանկը՝ պարզում ենք, որ նրա կեսից ավելին կամ բնավ չի եղել հայերենի զործուն բառապաշարի բաղադրիչ կամ, եթե եղել է, ինչ-որ ժամանակ դուրս է մնացել այդ բառասլաշարից:

Հայ մատենադրության մեջ գործածված հունարեն բառերի է՛լ ավելի փոքր մասն է մնացել արդի հայերենում: Վերցնենք, օրինակ, մի քանի բառեր, որոնք դրված են միայն ա-ով սկսվող բառերի ցանկում. անափոռո (բյուզանդական տիտղոս), ագրիտիս (սեզ), տկաոն (բերդ), սկողուր (բյուզանդական տիտղոս), ակումիտ (կրոնական տիտղոս), ամարանտինէ (ադամանդե), ամնոս (դառն), անագանոս (դրակարդաց), անափորայ (աղերսագիր), անդիլիպս (պաշտպան), անոն (թոշակ), ասփաղօք (նավթ), արգիտէս (արագ կայծակ), ափիմեոինոս (ամենօրյա) և այլն: Հասկանալի է, որ այս և այսպիսի բազմաթիվ բառեր արգի հայերենին անծանոթ են: Հունական փոխառությունների վերոհիշյալ ցանկում եղած 915 բառից ամենազիջողական ընտրության դեպքում կարելի է թողնել 130-ը, որ կարող են համարվել գործածական արդի հայերենում: Ընդ որում, այս քանակի մեջ թողնում ենք նաև այն բառերը, որոնք արդի հայերենը մեջ փաստորեն նորից են մտել, այս անգամ եվրոպական այլ լեզուներից, ինչպես՝ լիտեր, լիմոն, դելփին (այժմ դելֆին), պուետէս (այժմ՝ պոետ), և այլն. թողնում ենք նաև հազվագեպ գործածվող այնպիսի բառեր, ինչպես՝ կաղամար, մորոս, հասպիս, պրաս (բույս է), ֆուեպիսկոպոս և այլն:

Արաբական փոխառությունների ցուցակի 702 բառից դարձյալ շատ զիջողական ընտրության դեպքում կարելի է թողնել առավելագույնը 50—55-ը, որոնք կարող են համարվել արդի հայերենի զործուն բառապաշարի բաղադրիչներ:

Նվ այսպես. հայերեն օտար փոխառությունների քանակը ներկայացնող այն թվերը, որ ավանդաբար բերվում են, վերանայման կարիք ունեն:

Փաստերը ցույց են տալիս, որ հայերենը իբրև գրոց լեզու, սկսած դարից զրավոր խոսքի մեջ իր կատարած փոխառությունների քանակով այն լեզուների շարքին պիտի դասվի, որոնք համեմատաբար զուսպ են եղել օտար փոխառությունների հարցում:

Այսպիսով, ինչպես էլ մոտենալու լինենք հարցին՝ այս մի փաստարկն է (այսօրվա օտարաբանությունը անցյալում կատարված իբր շատ փոխառություններով հիմնավորելը) անհիմն է դուրս ղալիս:

5. Օտարաբան տեսության պաշտպանների փաստարկներից մեկն էլ այն է, որ հայերեն գիտական անվանումները, մանավանդ նորաստեղծներն ու գրաբարի շօգտագործվող բառապաշարից վերցվածները կեղծ են, շինծու, արհեստական, մեռած, նաև՝ սխալ: Ինչ խոսք, հայերեն (ինչպես և ամեն մի լեզվի) գիտական անվանումների մեջ լինում են անհաջողները, բայց մի՞թե գա նշա-

11 Բառերի կողքին, փակագծում Հ. Աճառյանի բացատրություններն են տրված:

նակում է, որ պետք է առհասարակ հրաժարվել հայկական տերմինաշինությունից: Եթե մի անգամ մեր գնած հացը անհաջող է լինում, մի՞թե դա նշանակում է, որ պետք է առհասարակ հացից հրաժարվել: Օրինակ, անշուշտ, ճիշտ չէ ալսոր գաստրոնոմ-ը ուրկրամուկ կամ մաքեմատիկա-ն ուսողություն թարգմանելը, ինչպես առաջարկում են երբեմն: Գուցե առայժմ դժվար է նաև սուխուտենու-ի փոխարեն ընթերսկա կամ ինտենդանտ-ի փոխարեն համբարակ գործածելը: Սակայն օտարաբան տեսության կողմնակիցները այստեղից զարգացնում են իրենց միտքը և մերժում նաև ֆուլաֆակսնություն-ը, բանաձև-ը, ֆաստիֆ-ը, դեղատոմս-ը, տրամաբանություն-ը, գեղագիտություն-ը, հեռախոս-ը, կենսաբանություն-ը և այսպես շարունակ:

Ուշագրավ է նշել, որ մի դեպքում հայերեն անվանումները քննադատվում են այն պատճառով, որ նրանք օտար տերմինների բառացի թարգմանությունը չեն, իսկ մի այլ դեպքում մերժվում են բառացի թարգմանված լինելու համար: Օրինակ, մերժում են բիբլիոգրաֆիա-ն մատենագիտություն կամ էսքետիկա-ն գեղագիտություն թարգմանելը այն պատճառաբանությամբ, որ այժմ մատենագիտություն անվանվող առարկան բնավ էլ գրքերի (մատյանների) մասին գիտություն չէ, իսկ գեղագիտություն-ն էլ (որ բառացի նշանակում է դիտություն, ավելի ճիշտ, իմացություն գեղեցիկի մասին) մերժվում է այն պատճառով, որ իբր ավելի նեղ հասկացություն է արտահայտում, քան էսքետիկա-ն: Այդպես պնդելիս մոռացության է տրվում, որ եթե բիբլիոգրաֆիա և էսքետիկա ունական բառերն էլ բառացի հասկացվեն, ավելի մեծ սխալների պատճառահրառնան, քանի որ բիբլիոգրաֆիա բառացի նշանակում է գիրք գրելը կամ ընդօրինակելը, որ այսօր ավելի հեռու է անվանվող առարկայի էությունից, իսկ էսքետիկան էլ նշանակում է զգացողություն, որ բնավ ճիշտ չի արտահայտում առարկայի ներկայիս ըմբռնումը:

Այդպես կարելի է բերել բազմաթիվ հունական, լատինական, ռուսական, անգլերենական, ֆրանսիական և այլ անվանումներ, որոնք ալսոր անհեթեթություն կթվան, եթե բառացի հասկացվեն (օրինակ, գեներալ բառացի նշանակում է ընդհանուր կամ գլխավոր, դիալեկտիկա՝ բանավեճ, սոցիալառո՝ գրգռող. դեկան՝ տասնապետ, рудьба՝ հատվածք, карандаш՝ սև քար և այլն): Հայտնի է, որ լեզուներում բաղաձայնային բառեր ու գիտական անվանումներ բառացի չեն ըմբռնվում, այլասլես ոչ մի լեզու զարգանալ, ճոխանալ չի կարող: Այդպես է նաև հայերենում. վաղուց ի վեր սովորական դարձած շատ բառեր, ինչպես՝ տիկզերֆ, տիկին, տնտեսություն և այլն բառացի չեն ըմբռնվում (տվյալ դեպքում բառացի կնշանակեն՝ մեծ եզերք, մեծ կին, տուն տեսնելը):

Օտարաբան տեսությունը ջերմորեն պաշտպանող հեղինակներից մեկը (Պ. Նազարյան) ծաղրի է ենթարկում ֆալաֆակսնություն և ստվարաքուղբ բառերը, քանի որ առաջինը, ըստ այդ հեղինակի, բառացի նշանակում է градусование, իսկ երկրորդը՝ толстобумага¹²: Հայերեն հիշյալ բառերը անհեթեթ համարող տեսաբանը, ըստ երևույթին, աչքաթող է արել, որ հայերենում այդ անվանումները բառացի չեն հասկացվում և որ այլ լեզվով դրանք բառացի թարգմանելն է անհեթեթությունը:

Հայերեն գիտական անվանումները, ինչպես ասվեց, հաճախ էլ քննադատվում են օտար տերմինների բառացի թարգմանություն լինելու համար: Օրին-

¹² «Октябрь», 1956, № 10, էջ 190.

նակ, մերժում են բանասիրություն-ը, որ հունական փիլոլոգիա-ի ռառաջի՝ թարգմանությունն է (թեև բաղադրիչների շրջամամբ), մերժում են նաև եզր-տերմին-ի, երկրաբանություն-ը՝ զեոլոգիա-ի կամ կենսաբանություն-ը՝ բիոլոգիա-ի բառացի թարգմանությունը լինելու համար։ Հարց է առաջանում, թե ինչո՞ւ տվյալ հասկացությունները կարելի է կոչել նրանց հիմնականում ճիշտ բնորոշող, բայց հայերենում անհասկանալի օտար բառերով և չի կարելի «գտազործել այդ բառերի հայերեն բառացի թարգմանությունները, որոնք նույնպես հիմնականում ճիշտ են արտահայտում անվանվող առարկաների էությունը։

Ասում են, նաև թե հայերեն նորաստեղծ անվանումները հնարված (թիսված) են, տնարույս (կարիներտային) և այլն։ Բայց չգիտես ինչո՞ւ, «մոռանում են, որ հունարենի, լատիներենի, ֆրանսերենի և այլ լեզուների միջոցներով կազմված բազմաթիվ անվանումներ, սկսած տելեֆոն-ից, տելեվիզոր-ից վերջացրած վելոսիպեդ-ով ու կոսմոնավտ-ով նույնպես հնարված են սենյակաների մեջ (թիսված և կարիներտային)։ Չպետք է մոռանալ, լեզվական այն օրենքը, որի ուժով ամենաարհեստական ու շինծու թվացող բառերն էլ համապատասխան իմաստով դորժածվելու դեպքում սկսում են շատ սովորական ու բնական դառնալ։

Այսպես, օրինակ, «գրասենյականերում» են ստեղծված նաև հայերեն այնպիսի բառեր ու դիտական անվանումներ, ինչպես՝ քրվածին, երկարուզի, աշխաբագրություն, բնագիտություն, շոգեֆաշ, շոգեշաքժ, պսլրուզիկ, ջերմաչափ, ինֆնաթիո, գեղացիք, հրաճոք, հրացան, ուղղաթիո, սուզանավ, տպաբան, տպագրություն, տնտեսություն և բազմաթիվ ուրիշներ, որոնք շատ դորժածվելով այսօր բնավ շինծու կամ արհեստական չեն թվում։

Վերջերս մեր մամուլը գործածում է՝ հյուրախաղ, պալմենկիք, երգահան, վառատոն, նվագավառ, մակնիշ, մեցաշառ, ձայնապնակ, ալմեդույր, նույնիսկ՝ հանրախանութ (ունիվերսալ-ի փոխարեն), բեռնաբեկ (էմբարգո-ի փոխարեն), ստուգայց (քղրակցական ռեյդ-ի փոխարեն) և այլն։ Մի՞թե պարզ չէ որ շատ դորժածվելու դեպքում այս կապի երբեմն «շինծու» թվացող շատ բառեր ու անվանումներ դառնում են սովորական։

6. Հայերեն դիտական մի շարք անվանումներ էլ մերժվում են այն պատճառաբանությամբ, որ լիովին չեն արտահայտում ողուսերենում գործածվող բառի իմաստը կամ իմաստները։ Օրինակ, երբ рещепт-ը թարգմանում են ղեղատոմս կամ портрет-ը՝ դիմանկար, ումանք կտրականապես առարկում են դրան, այն պատճառով, որ рещепт-ը միայն ղեղի տոմս չէ, այլ նաև, ասենք, խմորեղենի, խմիչքի տոմս և որ портрет-ը լինում է ոչ միայն նկար, այլև՝ քանդակ և այլն։ Մի կողմ թողնենք այն, որ գործածելու դեպքում կարելի է բնութանալ դիմանկար-ի ու ղեղատոմս-ի նաև այդ իմաստներին, բայց ո՞վ ասաց, որ պարտադիր է օտար մի անվանման դիմաց ամեն դեպքում հայերեն մի բառ ղեկելու եթե այդպես մոտենալու լինենք, ոչ մի լեզվում օտար բառեր թարգմանել հնարավոր չի լինի, բանի որ բոլոր բառերի լիակատար համարժեքություն լեզուներում չկա և չի կարող լինել։ Թարգմանական արվեստում բնորոշված է բաղմիմաստ օտար բառը հաճախ երկու և ավելի բառերով թարգմանելու։ Վերջերս, օրինակ, լրագրերը գործածում են լալուտոմս անվանումը, որը կարող է նշանակել նաև խմորեղենի, խմիչքների և շատ ուրիշ բաների рещепт։ Նույն կերպ портрет-ը թարգմանում են և՛ դիմանկար, և՛ դիմա-

խանդակ, ըստ հարկի՝ Այնպես որ, բազմիմաստ օտար անվանման դիմաց նույն-
քան բազմիմաստ հայերեն անվանում չլինելու դեպքում՝ բնավ ճիշտ չէ հրա-
ժարվել օտար բառի իմաստներից մեկը կամ մի քանիսը արտահայտող հայե-
րեն բառերից։

Հաճախ էլ հայերենի մեջ մտած ավելորդ փոփոխությունները աշխատում
են պաշտպանել հակառակ կողմից, այն է՝ եթե օտար երկու բառի դիմաց հա-
յերեն մի բառ է լինում, ապա սա նույնպես դիտում են իբրև թերություն, և
օտար բառերից մեկի ներմուծումը գնահատում են իբրև լեզվի հարստացում
Այսպես, ռուսերենում օգտագործվող завод և фабрика բառերի դիմաց հայե-
րենն ունի միայն զործարան, որ լիովին արտահայտում է հիշյալ երկու բառերի
իմաստը։ Սակայն թարգմանիչները «заводы и фабрики», «фабрико-
заводской» ռուսերեն բառերը փոխանակ ճիշտ թարգմանելու՝ «գործարաններ»
և «գործարանային», թարգմանում են «գործարաններ և ֆաբրիկաներ», «ֆաբ-
րիկա-գործարանային», որ հայերենի համար ընդունելի չեն, քանի որ այս լեզ-
վում չկա զործարան և ֆաբրիկա բառերի որևէ իմաստային տարբերակում։
Այդպես, ֆաբրիկա բառը և նրանից կազմվածները բոլորովին անիմաստ կեր-
պով մտել են հայերենի մեջ։

Ոմանք միամտորեն փորձում են ինչ-որ տարբերակումներ դնել զործա-
րան և ֆաբրիկա բառերի արտահայտած ըմբռնումների մեջ, որ իբր անաչիներ
ժանր արդյունաբերության ձեռնարկություն է ցույց տալիս, երկրորդը՝ թեթև
կամ՝ իբր անաչիներ գործածվում է հումքի մշակման, իսկ երկրորդը կիսահում-
քի օգտագործման ձեռնարկությունների համար և այլն։ Այս կարգի բոլոր բա-
ցատրությունները մտացածին են, քանի որ նման որևէ տարբերակում իրակա-
նում չկա։ Բավական է հիշենք հայկական թերթերից այսպիսի կասկածյալությու-
ններ՝ կաբի ֆաբրիկա և պանածոյի զործարան (երկուսն էլ թեթև արդյունաբե-
րություն), իսկ դրանց կողքին հաբստացուցիչ ֆաբրիկա (ժանր արդյունաբերու-
թյուն), հիշենք նաև հայերենում ուղղակի ծիծաղաշարժ բռնաբռնական ֆաբ-
րիկա-ն և ծիաբնական զործարան-ը։ Պարզ է, այս բոլոր անվանումները ռու-
սերենից ընդօրինակված են առանց հաշվի առնելու հայերենի առանձնահատ-
կությունները։

Ռուսերենում էլ завод և фабрика բառերը իմաստային օրինաչափ տարբե-
րակում չունեն, բայց այստեղ յուրաքանչյուրն ունի իր կիրառման դեպքերը.
ռուսերեն խոսելիս, գրելիս՝ ուղղակի պետք է հիշել, թե որ դեպքում է գործած-
վում մեկը, որ դեպքում՝ մյուսը։

Նույն կերպ փորձ է արվել հիմնավորելու գրավյուրա-ն. իբր փոբագրու-
թյուն պետք է անվանել նկարչի փորագրական համապատասխան աշխատանքը
միայն, իսկ կերպարվեստի տվյալ տեսակը կամ ժանրը՝ կոչել՝ գրավյուրա, թեև
փոբագրություն-ը երկու դերն էլ շատ լավ կատարում է։ Նրբերանգ նշանակում
է և՛ оттенки, և՛ нюансы, և այս երկու բառերն էլ հայերենում ավելորդ են, բայց
երբեմն անաչարկում են նրբերանգ բառով թարգմանել միայն դրանցից մեկը,
մյուսը (нюансы) օգտագործել հայերենում և այլն։

Ոմանք էլ փորձում են հիմնավորել այնպիսի անվանումների դործածու-
թյունը հայերենում, ինչպես, ասենք կոնցերտ կամ աուսիտ՝ պատճառաբանե-
լով, թե կոնցերտ բառով երաժշտական ժանրը պետք է կոչել (ինչպես՝ դաշնա-
մուրային կոնցերտ)։ Իսկ համերգ-ով կատարումը, բայց մոռանում են, որ
ասենք, ռուսերենում, концерт բառը և՛ ժանր է նշանակում, և՛ կատարում, ո

ու մի ուսու չի խառնում այդ հասկացությունները (ինչպես՝ Первый скрипичный концерт և иду на концерт): Միանգամայն բնական կլինի հայերենում էլ ասել առաջին դաշնամուրային համերգ և զնում եմ համերգ, ոչ ոք չի շփոթի այս «համերգները»: Հայերենում ավելորդ է նաև արտիստ բառը, որ շատ պաշտպաններ ունի, նրա տարբեր նշանակությունների համար կան դերասան և արվեստագետ բառերը:

Այսպիսով, օտարաբանությունները պաշտպանելու այս կարգի պատճառաբանությունները ևս հիմնավոր չեն. հայերեն բառերը մերժվում են այն նույն պատճառաբանությամբ, որով փորձում են հիմնավորել օտար բառի գործածությունը:

7. Հաճախ էլ հայերեն շատ բառեր ու գիտական անվանումներ մերժվում են այն պատճառաբանությամբ, որ «երկար» են, «ծանր», իսկ համապատասխան օտար բառերը կարճ: Այդպես քննադատվում կամ մերժվում են արտադրամաս-ը, գրոսաշրջիկ-ը կամ գրոսաշրջիկային-ը, տպագրական-ը և այլն (պաշտպանելով՝ ցեխ-ը, տուրիստ-ը, տիրաժ-ը և այլն):

Սակայն, եթե «երկար ու կարճ» բառերի այս փաստարկը լուրջ լիներ, ապա ստիպված պետք է հրաժարվեինք հայերեն բոլոր այն «երկար» բառերից, որոնց դիմաց կան օտար ավելի կարճ բառեր, ինչպես, ասենք, հրաժարվել պահարան-ից՝ վերցնելով шкаф-ը, հրաժարվել ամառանոց-ից՝ վերցնելով дача-ն, խաղաղությունից՝ վերցնելով мир-ը, սեղան-ից՝ վերցնելով стол-ը և այլն: Այդ դեպքում ուսներն էլ պետք է հրաժարվեին, ասենք, человек-ից՝ վերցնելով մարդ-ը, հրաժարվեին королева-ից, վերցնելով կով-ը, писатель-ից՝ վերցնելով գրող-ը և այլն: Գերմանացիք ստիպված պիտի լինեին հրաժարվելու իրենց գիտական անվանումների շատ զգալի մասից, բայց ոչ մի գերմանացու մտքով չի անցնում հրաժարվել, ասենք, der Unterbrigadenführer (օղակավար), die Produktionsverhältnisse (արտադրահարաբերություններ), die Arbeitsproduktivität (աշխատանքի արտադրողականություն), ինչպես նաև՝ die Unbedenklichkeitsbescheinigung և նման բազմաթիվ ուրիշ անվանումներից նրանց «երկարության»՝ կամ «ծանրության» համար: Այսօր գերմանական սովորական օրաթերթերում կարելի է գտնել այնպիսի երկար բառեր, որոնց մոտ գրոսաշրջիկային-ը բավական «գաճաճ» կթվա:

Հայերեն գիտական անվանումներից նրանց «երկարության» պատճառով հրաժարվելու պահանջն, այդպիսով, նույնպես ճիշտ չէ:

8. Օտարաբան ուղղության փաստարկներից մեկն էլ հետևյալն է. տերմինները, բառերը հայերենում պետք չէ թարգմանել, որպեսզի շատանան լեզուների ընդհանրությունները և փոխհասկանալիությունը: Պնդում են, թե որքան շատ լինեն միևնույն բառերը տարբեր լեզուներում, այնքան փոխադարձաբար հասկանալի կլինեն այդ լեզուները, այնքան կմերձենան նրանք: Նախ՝ այս փաստարկի մեջ հաշվի չի առնվում այն, որ անհնար է որոշել, թե հատկապես որ բառերն ու անվանումները չպետք է թարգմանվեն բոլոր լեզուներում, անհնար է երբեք կազմել նման բառերի ցուցակ, և մանավանդ անհնար է պահանջել բոլոր լեզուներից չթարգմանել այդ բոլոր բառերը: Բայց եթե նույնիսկ պատկերացնենք, որ նման ցուցակ կազմվել է և բոլոր ազգերը համաձայնվել են չթարգմանել այդ ցուցակի բառերը, ապա միևնույն է, այդ չթարգմանելը որևէ կերպ չի նպաստի լեզուների փոխհասկանալիությանը և փոխմերձեցմանը, քանի որ միևնույն բառը տարբեր լեզուներում հնչյունաբանական, բառակազ-

մական, բերականական և իմաստային այնպիսի փոփոխությունների է ենթարկվում, որ տվյալ լեզուն չիմացողը կարող է լսել իր «իմացած» բառը և չհասկանալ այն: Օրինակ, անգլերեն չիմացող ֆրանսիացին լսելով ինքրեն չհասկանալի, սրբալի, քալքի և այլն չի հասկանա, որ այդ բառերը իր մայրենի լեզվում գործածվող էմոբնասյունալ, նասյուն, սոասյուն, տիտեր բառերն են, անգլերեն չիմացող ռուսն էլ չի հասկանա, որ դրանք իր կողմից գործածվող իմոբնացիոնալ, նացյա, սոանցյա, տիտուլ բառերն են: Կամ մի՞թե հոլանդացին լսելով ռուսերեն «хорошие зонтики» կապակցությունը, կհասկանա, որ երկրորդ բառը իր մայրենի լեզվի Zondek (zonnedeek) բառն է հոգնակի թվով: Նույնիսկ հատուկ տեղանունները տարբեր լեզուներում հաճախ անճանաչելիորեն փոխվում են, ինչպես օրինակ՝ Չինաստան՝ Շին (Ֆր.), Խինա (գերմ.), Չայնա (անգլ.) և այլն:

Եվ այսպես, օտարաբանական տեսության մեջ առատ փոխառությունների միջոցով լեզուների փոխհասկանալիությունը, փոխմերձեցումը մեծացնելու փաստարկը նույնպես անհիմն է, լեզուներ և լեզվաբանական տեսություն չիմանալու արդյունք:

9. Այլալեզու բառերն ու տերմինները չթարգմանելու պաշտպանները հաճախ են իրենց պահանջները փորձում հիմնավորել նաև լեզուների մահացման տեսությամբ, ըստ որի աշխարհի բոլոր լեզուները պետք է վերանան, և ամբողջ մարդկությունը պետք է խոսի մի նոր, համընդհանուր լեզվով: Մի կողմ թողնենք, թե որքանով է իրականանալի այս տեսությունը և որքանով է լավ, եթե աշխարհում մի լեզու լինի միայն: Ենթադրենք, թե իրոք հետազայում մի լեզվով է խոսելու մարդկությունը. բայց մի՞թե դա նշանակում է, թե այսօր օգտագործվող լեզուները պետք է բարձիթողի արվեն, որ պետք է թույլ տրվի ազատորեն ոտնահարել այդ լեզուների ներքին օրինաչափությունները, ավանդական օրենքները: Ըստ որոշ տեսաբանների ասլագայում մարդը օրվա մեջ մեկ-երկու հար է կուլ տալու, և դա լիովին բավական է լինելու նրա մարմնի սնման համար: Ենթադրենք, թե ապագայում իրոք այդպես է լինելու, բայց մի՞թե դրանից հետևում է, որ այսօր արդեն մարդիկ սովորական սննդամթերքներ չպետք է արտադրեն և ընդունեն:

Ուրեմն ինչ-որ հեռավոր ապագայի մասին եղած ենթադրությունները որևէ կերպ չեն կարող հիմք դառնալ այն բանի, որ այժմ արդեն սկսենք լեզուները ոչնչացնել: Այսօր շատ լեզուների դոյությունը փաստ է, փաստ են նուև այդ լեզուների յուրահատկությունները, օրենքները, բառապաշարը, որոնք պետք է հարգվեն: Այսօր ռուս մտավորականությունը կտրականապես մերժում է ռուսերենի ուղղագրության մասնակի փոփոխություններն անվամ, ուղղագրական ավանդների ամեն մի խախտման դեմ է նույնիսկ անգլիացի, արաբ, ֆրանսիացի մտավորականության հիմնական մասը, թեև այդ ավանդների ստեղծած դժվարությունները հանրահայտ են: Ոչ ոք չի հանդիմանում պահանջել, որ ասենք, լեհերենի, դերմաներենի, վիետնամերենի, չեխերենի, արաբերենի կամ մի այլ լեզվի որևէ բառ հանվի և փոխարենը սպարտադրվի մի այլ լեզվի բառ: Ամեն մի լեզու, իր օրենքներով հանդերձ պետք է հարգվի, հայերենն էլ բացառություն լինել չի կարող:

10. Նույն ուղղության որոշ ներկայացուցիչներ վերջին ժամանակներս զգալով, որ անհնար է բառային փոխառությունների հարցում բոլոր լեզուներին նույն չափանիշով մոտենալ և որ պետք է հաշվի առնել ամեն մի լեզվի

զարգացման ներքին օրինաչափությունները, ասում են, թե իբրեւ հայերենի յուրահատկությունը, զարգացման օրենքը կղել է և է օտար գիտական անվանումների առատ փոխառությունը և հակումը օտար բառերի «յուրացման» նկատմամբ: Այս պնդումը շատ հեշտ է հերքվում: Բավական է համեմատել տարբեր ժամանակների հայ մամուլի լեզուն կամ միևնույն հարցին նվիրված տարբեր ժամանակ հրատարակված երկու գիրք և պարզ կդառնա, որ հայերենի զարգացման ներքին օրինաչափությունը ինքնահստակեցումն է: Այսինքն՝ հայոց լեզուն միշտ ձգտել է հայոց կյանքի մեջ թափանցող ամեն մի նոր հասկացություն հայերեն արտահայտել, բայց երբ այդ չի հաջողվել, ընդունել է հասկացության օտար անունը, բառը, սակայն, մեծ մասամբ ժամանակի ընթացքում գտնվել է կամ ստեղծվել համապատասխան հայերեն բառ, որը և զրավել է փոխառյալի տեղը: Այսպես, 1910-ական թվականների թիֆլիսահայ մամուլում առատորեն գործածված են այնպիսի բառեր, ինչպես, բեցեճգիս, ֆորմուլա, յաշչիկ, գրուպպա, արտիլերիա, պրինցիպ, պուլեմյոտ, գարանտիա, պաբալիշ, ցիտատ, աեռուպան, տելեֆոն, տելեգրաֆ, վելոսիպեդ և շատ ուրիշներ: որոնք այժմ լեզվից զուրա՞ն մնացել փոխարինվելով համանիշ հայերեն անվանումներով (գրախոսություն, բանաձև, արկղ, խումբ, հեռաձև, սկզբունք, զնդացիւ և այլն):

Եթե համեմատենք Երևանի 15—20 տարի առաջվա և ներկայիս հայերեն մամուլը, նույնպես այս կարգի փոփոխություններ կտեսնենք, օրինակ, շուրջ 15 տարի առաջ լայնորեն գործածվող ռայոն, ֆիլոլոգ(իա), զեոլոգ(իա), բիոլոգ(իա), շտատ, լսուբետ, մսուկա, ստադիոն և շատ ուրիշ բառեր ու անվանումներ այսօր փոխարինված են կամ փոխարինվում են հայերեն բառերով (շրջան, բանասեր, երկրաբան, կենսաբան, հաստիֆ, դափնեկիր, մակնիշ, մարզադաշտ և այլն): Այդպես է կղել և հնում. մենք արդեն ցույց տվեցինք, թե որքան հունական, արաբական, պարսկական փոխառություններ զուրա են մնացել հայերենից: Ֆիզիկայի՝ 1920-ական թվականներին լույս տեսած դասագրքերում գտնում ենք մախավիկ, տրսեկտորիա, ատմոսֆերա, տեմպերատուրա, մոմենտ, ֆորմուլա, պարսլեյոգրամմ և նման ոչ բիշ օտարազգի բառեր, որպիսիք ֆիզիկայի այսօրվա, անգամ վատ թարգմանված դասագրքում փոխարինված են հայերեն անվանումներով (քափանիվ, հետագիծ, մրնոլորտ, ջերմություն և այլն):

Կնշանակի, եթե հայերենի ներքին օրինաչափությունը ինքնահստակեցումն է, լեզվաշինության մեջ պետք է առաջնորդվել լեզվի այդ ձգտմամբ և ոչ թե մտադածին օրենքներով:

Հայ լեզվաբանության մեջ խոսվում է տերմինաշինության բնագավառում իբր տեղ գտնող երկու ծայրահեղությունների մասին: Մի ծայրահեղությունը համարվում է օտարամոլությունը, մյուսը մաքրամոլությունը: Մեզ թվում է, թե այս դեպքում էլ պակասում է խստորեն գիտական մոտեցումը, քանի որ ամեն մեկը յուրովի է հասկանում «ծայրահեղություն»-ը: Մեկն, օրինակ, մաքրամոլական ծայրահեղություն է համարում նախադասականություն, քաղաքականություն, ստվարաբույր, ապակի բառերի գործածությունը հայերենում, բնականոն համարելով՝ արխիտեկտուրա, պոլիտիկա, կարտոն, շուշա բառերի օգտագործումը, մյուսի կարծիքով ծայրահեղություն են դաշնամուր-ն ու րնդունիշ-ը և ճիշտ է պիանինո, պրիումենիկ օգտագործելը, մի ուրիշն, իհարկե, խիստ օտարամոլություն է համարում հայերենի մեջ արխիտեկտուրա, պոլիտի-

կաւ, պիտանինո և մյուս բառերի մուտքը: Մի այլ հեղինակ էլ, ահա մաքրամոլութիւնն է համարում հյուրախաղ-ն ու դաւինեկիր-ը, ակնաբույժ-ն ու մանկաբույժ-ը, որոնց հակառակ, այլ մարդիկ այս անվանումները միանգամայն հառող հայերեն բառեր են համարում, բայց մաքրամոլական ծայրահեղութիւնն են զիտում պոմիդոր-ի փոխարեն լոլիկ, բալդիջան-ի փոխարեն սմբուկ, ավտոմոբիլ-ի փոխարեն ինֆնաշարժ, ատոմ-ի փոխարեն հիւլե օգտագործելը, բառեր, որոնց գործածութիւնն էլ այլոց կարծիքով միանգամայն բնականոն է և բնավ որևէ ծայրահեղութիւն չէ, ու այսպես շարունակ: Իրոք, անձնական ձաշակներից, խիստ անհատական հակումներից բխող «ծայրահեղութիւն» պատկերացումներին վերջ չկա: Պետք է խոստովանել, որ չկա, օրինակ, մաքրամոլական ծայրահեղութիւն գիտական սահմանում: Իրրև այդ ծայրահեղութիւնն նմուշներ բերված բոլոր օրինակները կամ ակնհայտորեն անհաջող, մերժելի թարգմանութիւններ են (ագիտատուր-ը՝ խոռվարուր, ֆրակ-ը՝ պոչագգեստ, ոսկաք-լոխում-ը՝ հանգստապատառ, գաստրոնոմ-ը՝ ուկրամոլ) և կամ անսովոր անվանումներ, ինչպես, մանիշ (յոգ), կնդրին (բենզին) և այլն, որոնց՝ մի օր հայերենի մեջ գործածվելու հնարավորութիւնը ոչ ոք չի կարող լիովին բացառված համարել: Այս դեպքում մարգարեութիւն անելն անիմաստ է (հիշենք, որ մի ժամանակ կարծիք կար, թե հեռախոս, հեծանիվ, վառարան և ուրիշ բառեր չեն կարող հայերենում սովորական գառնալ, մինչգեռ այդ բառերը գարձան սովորական):

Եվ այդպես, եթե բառի թարգմանութիւնը անհաջող է, լեզվի կողմից մերժվող, ապա այն չի գործածվի լեզվում, ինչպես, որ չեն գործածվում խոռվարուր-ը, ագիտատուր-ի, երկարախիմորակլորածակ-ը մակարոն-ի կամ պոչապոչ-ը ֆրակ-ի փոխարեն: Ուրեմն այսպիսի գեպքերում ոչ թե ինչ-որ «ծայրահեղութիւն» կա, այլ կա վրիպում: Եթե այդ բառերը հաջող թարգմանվեին (ինչպես, ասենք, թարգմանվել են կաբաչկի-ն՝ դղմիկ կամ պալտո-ն՝ վերսուլու) ու գործածվեին, ապա «ծայրահեղութիւն» մասին խոսք չէր լինի: Իսկ եթե որևէ բառ այսօր չի «հարմարվում» լեզվում, բայց վաղը կարող է ընդունելի գառնալ (ինչպես հեռախոս, հեծանիվ, կրկնակոշիկ, բանասեր, գուցե ավելի ուշ՝ կոլիկ, հիւլե, հրասայլ և այլն), ապա «ծայրահեղութիւն» ըմբռնումն այս դեպքում էլ անիող է: Ամեն դեպքում երկու ծայրահեղութիւնների առաձգական տեսակետը գիտական տերմինաշինութիւն հիմք լինել չի կարող: Այն սխալ է փոխարինվի խստորեն տրամաբանված բանաձևով, որը մեր պատկերացմամբ կարող է լինել միայն հետևյալը. ամեն մի գիտական հասկացութիւն համարնախ պետք է գտնել հայերեն անվանում (հին, մոռացված բառի նորիմաստ գործածութիւն, ինչպես՝ հաստոց, վրար, հաստիֆ, խոտան, բարբառային կամ գրական ծանոթ բառերի նեղիմաստ գործածութիւն, ինչպես՝ սարֆ, տատմեր, խուզ (ոչխարի խուղ), սիրող, ընթերցող, մակարդակ, ջարդիչ), եթե այս չի հաջողվում, հայերենի միջոցներով պետք է ստեղծել նոր անվանում (ինչպես՝ հնգամարտ, հարացույց, քաղաքախիկ, թեֆույթ, ջերմափարշ, կցաշուրթ, հոլաստիլեր, տեսակարար ջերմունակութիւն), եթե այդ էլ չի հաջողվում, սխալ է փորձել օտար անվանումը ենթարկել հայերենի հնչյունաբանական կամ բառակազմական կանոններին (ինչպես, թեորեմա՝ թեորեմ, ափսյումա՝ ափսյում, տոննա՝ տոնն, էլեկտրոմոնտյոր՝ էլեկտրամոնտյոր և այլն), սրա հնարավորութիւնն էլ չլինելու դեպքում նոր միայն կարելի է օտար անվանումը նույնու-

թյամբ դործածել (ինչպես՝ նեյտրոն, պոզիտրոն, իոն, ֆլանտ), չբացատրելով նրա հայերեն թարգմանությունը ապագայում:

Սա րստ երևույթին հայերենի հնարավորությունները առավելագույն չափով օգտագործելու օրենքն է և այն արժանիքն ունի, որ տերմինաշինության մեջ նրանով առաջնորդվել նշանակում է հայերենի բառակերտման «մեքենան» առավելագույն ծանրարեոնվածությամբ աշխատեցնել, որն իր հերթին ազդակ կհանդիսանա հայոց լեզվի նորանոր հնարավորությունների բացահայտմանը:

Այս օրենքը բխում է հայոց լեզվի դարգացման ներքին հակամենքից և թվում է, թե միակ դիտական հիմքն է հայերենի տերմինաշինության համար:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ РАЗВИТИЯ АРМЯНСКОЙ ТЕРМИНОЛОГИИ

Р. А. ИШХАНИЯН

Резюме

Статья посвящена некоторым актуальным вопросам развития научной терминологии армянского языка. Автор считает весьма важным разработку и установление терминов поставить на строго научную, теоретическую основу и отвергнуть научно необоснованные тенденции языкового строительства в этой области. Учитывая специфику термина как лексической единицы, автор одновременно в своих рассуждениях исходит из общепризнанного в языкознании положения о том, что научная терминология является составной частью словарного состава общенационального языка и что поэтому обогащение последнего новыми терминами во многом подчиняется тем же языковым закономерностям, что и обогащение языка общеупотребительными словами. На основании обширного фактического материала в статье делается попытка определить те главные тенденции развития словарного состава армянского языка (как советского, так и досоветского периода), которые должны учитываться при разработке теоретических основ дальнейшего развития и обогащения армянской научной терминологии.